«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ալեքսանդրյան և Անտիոքյան մեկնողական դպրոցներ

ԱՌԱՐԿԱ Հայ եկեղեցու պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Սուսան Գինոսյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գեղաձորի Արտակ Օհանյանի անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……...3

Մեկնողական ժանր ……...……....4

Գլուխ 1.Ալեքսանդրյան մեկնողական դպրոց

1.1 Ալեքսանդրյան դպրոց ……..8

1.2 Սուրբ գրքի ալեքսանդրյան մեկնություն…….10

Գլուխ 2. Անտիոքյան մեկնողական դպրոց

1.1Անտիոքյան դպրոց……13

Եզրակացություն……...20

Գրականության ցանկ……..…….22

Ներածություն

Սույն աշխատության մեջ փորձել ենք ներկայացնել թե ինչ է մեկնողական ժանրը, ինչպես է այն ձևավորվել, զարգացման ինչպիսի փուլեր է անցել , և առհասարակ ինչի համար էր անհրաժեշտ մեկնել Սուր գիրք : Ինչպես նաև ներկայացրել ենք թե ովքեր և ինչպես պետք է մեկնեին Սուրբ գիրքը:

Աշխատանքում ներկայացրել ենք պատմության մեջ հայտնի երկու դպրոցները՝ Ալեքսանդրյան և Անտիոքյան մեկնողական դպրոցներ: Արդեն գիտենք թե ինչպիսի մեծ դեր ու նշանակություն են ունեցել այդ երկու հզոր մեկնողական դպրոցները:Ներկայացրել ենք թե' Ալեքսանդրյան թե' Անտիոքյան մեկնողական դպրոցները՝ իրենց ձևավարման պահից , մինչև գործելու ավարտը: Ներկայացրել ենք Ալեքսանդդրյան մեկնողական դպրոցների մեկնողական դիրքորոշումները, ինչպես նաև դավանաբանական դիրքորոշումները:

Աշխատության մեջ ներկայացրել ենք նաև Անտիոքյան և Ալեքսանդրյան դպրոցների վառ ներկայացուցիչների, ինչպիսիք են Կղեմես Ալեքսանդրացին, Որոգինեսը (Ալեքսանդրյան դպրոց) ,Հովհան Ոսկեբերան, Լուկիանոս Սամոսատցին (Անտիոքյան դպրոց) ,մեկնողական և դավանաբանական դիրքորոշումները:

Աշխատության մեջ մանրակրկիթ ներկայացվել են այլաբանական և բառացի , տառացի մեկնության իմաստները:Ինպես նաև ներկայացվել են թե ինչու են Ալեքսանդրյան և Անտիոքյան մեկնողական դպրոցների ընտրել կամ հետևել մեկնության այդ եղանակին:

Առաջին գլխում մանրամասն ներկայացվել են Ալեքսանդրյան մեկնողական դպրոցը, իր վարդապետությամբ, ինչպես նաև ներկայացվել է Սուրբ գրքի ալեքսանդրյան մեկնությունը: Երկրորդ գլխում ներկայացվել է Անտիոքյան դպրոցի վարդապետությունը և Սուրբ գրքի անտիոքյան մեկնությունը:

Աշխատանքի վերջում ներկայացվել է մեր եզրակացությունը թեմայի վերաբերյալ :

Մեկնողական ժանր

Մեկնության ժանրը մի ընդարձակ և ծավալուն դրսևորում է, որը նախևառաջ ստեղծվել է Աստվածաշնչի ՝ Հին և Նոր կտակարանների գրքերի համար ի մասնավորի Հրեական , մասամբ նաև՝ Անտիկ փիլիսոփայության և հելլենիստական ավանդուրթների ստեղծագործական յուրացմամբ :Դրա նպատակն է եղել ահդ գրքերում ամփոփված դրվագների ծիսական և կենցաղային պատկերների , նշանների, տարազների կամ այդ գրքերի առանձին մասերի՝ տեսիլքների , երազների առակների,աստվածային ու մարգարեական պագամների , մտքերի անուննորի , տերմինների բառերի մեկնությունը որն անպայման թելադրված պիտի լինի աստվածային հայտնությամբ , որպեսզի այդ բոլորը մատճելի ու ըմբռնելի դառնան : Իհարկե մեկնությունները շատ կարևոր նշանակություն ունեին և անհրաժեշտ էին տվյալ ժամանակաշրջանի համար, սակայն ոչ բոլորին էր տրված դրանք կատարելու շնորհն ու իրավունքը, քանզի այդ կատարողը պիտի լիներ իմաստուն, շնորհալի մեկը: Այդ անձինք մեկնիչ – վարդապետներն էին:Միայն մեկնիճ-վարդապետներին էր թույլատրվումմեկնեկու Հին և Ն որ կտակարանների գրքերը , բացահաըտելու դրանց աստվածաբանական-կրոնագիտական հիմքը , սահմանելու դրանցից բխող վարդապետական-դավանաբանական բանաձևումները: Սուրբ գրքի մեկնությունը պայմանավորված է մի շարք սկղբունքներով :Անկախ կիրառվելիք մեկնաբանական եղանակից , մեկնիչն իր աշխատանքը պետք է իրագործի որոշ օղակների:Պետք է նախ ապահով լինել, որ ձեռքի տակ եղած բնագիրը ճշտված է :Դրա համար պիտի օգտվի արդեն իրագործված համեմատական բնագրից, եթե, իհարկե ,այդպիսին կա , կամ պիտի ձեռագրերի հիման վրա հաստատի ամենաստույգ ընթերցումը ր միայն հետո է , որ պիտի բացահայտի բնագրի իմաստ:[1]*

Մեկնության ժանրը ժամանակի ընթացքում ավելի զարգացավ և հետագայում մեկնություններն իրենք դարձան բացատրության նյութ՝ հիմք դնելով մեկնությունների մեկնությանը:

---

[1] Անթափյան Փ., Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, Բանբեր մատենադարանի, N 15, Երևան 1986:

*Գրիգոր Նիկոֆորը 14դ այս առնչությամբ շատ հետաքրքիր վկայություն է թողել, ըստ որի հարկավոր է նախապես ստուգել բնագրի ճշտությունը , ապա՝ համեմատել քաղվածքների մեկնությունը , բնագիրը պետք է ներկայացվի ամբողջությամբ , և չընդհատվի այնպիսի տեղերում , որոնք կարող են փոխել շարադրանքի միտքը , միշտ հարկավոր է նկատի ունենալ կոնտեքստը , որն իրմեջ ամփոփում է հեղինակի կողմից առաջ քաշած այս կամ այն դրույթը:

Քրիստոնեական մեկնաբանությունը անցել է պատմական զարգացման երեք հիմնական շրջան՝ վաղ միջնադարյան (Հայրաբանական՝ I – V դդ.), միջնադարյան (VI – XV դդ.) և նոր ժամանակներ (XVI – XX դդ.):Քրիստոնեական նախնական մեկնությունները ու առավելապես հրեական ավանդույթների վրա են ձևավորվել :Հատկապես արմատական խնդիրներում որոնք սկզբունք ,մեթոդ , նպատակ էին դառնալու , այդ հիման վրա են ուրվագծվել և հետագայում աստիճանաբար ընդլայնելով աստիճանաբար ընդլայնելով իրենց գործադաշտը ներընդունելով անտիկ աշխարհի և տվյալ դարաշրջանի կրոնագիտական և փիլիսոփայական, տեսական նվաճումները, միջին-արևելյան ժողովուրդների դիցաբանական , կրոնական պատկերացուները ավելի հարստացնել , մշակել և ուրույնացնել:

Նախնական մեկնությունները կատարվել են բանավոր, քարոզների տեսքով՝ ժողովարաններում, եկեղեցիներում: Այս իրողությունը նկատելի է Ավետարանում: Պողոս Առաքյալը, իր թղթերում ժողովրդի հետ խոսելիս, մեջբերում է հինկտակարանյան բազմաթիվ հատվածներ և բացատրում դրանք, այսինքն կատարում է մեկնություններ (Ա Կորնթ. Թ; 8 – 10, Հռոմ. Ա; 1 – 4 և այլն): Ուստի հարկ է ընդգծել այն միտքը, որ առաջին մեկնիչները հենց առաքյալներն են:[2]

Անշուշտ, մեկնությունները լինելով լայն և ծավալուն բնույթի աշխատանքներ, չէին կարող մնալ նախնական՝ բանավոր, զուտ քարոզչական աստիճանի վրա, հետզհետե ընդգրկում էին եկեղեցական, կրթական, մատենագիտական և մշակութային բոլոր ոլորտները: Առաջին հայացքից թվում է, թե մեկնությունները պարզապես պիտի իրենցից նյութի լոկ բացատրությունը ներկայացնեին (իհարկե պարզաբանբելը մեկնության բուն նպատակն էր), սակայն պետք էր հասկանալ մեկնվող նյութի ողջ բնույթը, ճիշտ կողմնորոշվել նյութի իմաստի մեկնաբանության ժամանակ, կողմնորոշվել եղանակային ընտրության հարցում: Պետք էր հասկանալ, թե մեկնաբանական որ եղանակն է անհրաժեշտ՝ տառացի, թե այլաբանական, պետք է գտնել ամենաէականը, և որ ամենակարևորն է, այն պիտի լիներ Աստվածահաճո:

[2] Անթափյան Փ., Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, Բանբեր մատենադարանի, N 15, Երևան 1986:

Բնական է, որ մեկնողական ժանրի ձևավորման ընթացքում պետք է առաջանային վերը նշված եղանակներից բխող բաժանումներ: Խնդո առարկա այս երկու եղանակները մշտապես եղել են քրիստոնեական մատենագրության ուշադրության կենտրոնում, քանզի դրանք իրենցից ներկայացնում էին կարևոր և նշանակալից երևույթներ. շատ հաճախ դրանցով է պայմանավորված եղել քրիստոնեական մտավորական շրջանակների բաժանումը հասարակական – քաղաքական կողմնորոշումը, մինչ եկեղեցական հարաբերությունները: Այսպիսով այն ձեռք է բերում շատ կայուն և ծանրակշիռ նշանակություն վարդապետական, դավանանքային, երբեմն նաև ծիսական հարցերի վերաբերյալ հմտություն ձեռք բերելու և դրանց շուրջ կողմնորոշվելու հարցերում:

Նախնական շրջանում դեռևս քրիստոնեական աշխարհայացքը զուգակցվում էր փիլիսոփայության, հատկապես նորպլատոնականության հետ, և ինչպես աշխարհն էր բաժանվում նյութական և ոչ նյութական մասերի, այնպես էլ մեկնողական ժանրի եղանակներն էին բաժանվում՝ տառացի և այլաբանական: Այս ժամանակաշրջանում տարածված էր ամեն ինչ սիմվոլիզացման միջոցով բացատրելու միտումը և այս իրողությունը թափանցել էր նաև քրիստոնեական մտածողության մեջ: Եվ միջնադարը, որ բացահայտ հակում է ցուցաբերել ամեն երևույթ պատկերավոր ընկալելու հանդեպ, պարարտ հող հանդիսացավ քրիստոնեական սիմվոլիզմի՝ լայն և ծավալուն կիրառություն ձեռք բերելու համար:

Ալեքսանդրիայի գերիշխող նշանակությունը քրիստոնեության մտավոր զարգացման ասպարեզում ըմբռնելու համար, պետք է ի նկատի ունենալ որ այդ փառահեղ, բազմամարդ, արևելքն ու արևմուտքը միացնող քաղաքում Ալեքսանդր Մեծի ժամանակներից սկսած կատարվել էր հունական և արևելյան առանձնահատկությունների ու քաղաքակրթության խառնուրդը, որ այդտեղ գլխավորապես իր ծաղկման շրջանն էր ունեցել հրեական հելլենականությունը: Քրիստոնեական մտքի մշակույթի և գիտության նշանավոր կենտրոններից մեկն է եղել Ալեքսանդրիա քաղաքը: Ալեքսանդրիա քաղաքը հայտնի է իր մշակութային, գիտական և կրթական հաստատություններով:Ալեքսանդրիայում տիրող փիլիսոփայական

ուղղությունը նորպլատոնականությունն էր, որը քրիստոնեության շրջանում մեծ ազդեցություն է ունեցել ալեքսանդրյան աստվածաբանության վրա[3]:

Ալեքսանդրիան Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ հայտնի է ոչ միայն իր պատրիարքական աթոռով, այլև՝ նշանավոր աստվածաբանական դպրոցով, որը քրիստնեական աստվածաբանական առաջին դպրոցն էր: Գնոստիցիզմի դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով՝ եկեղեցին մեծ ուշադրություն է դարձրել եկեղեցական գրականության զարգացմանը, դպրոցներ հիմնելուն, որոնք պետք է համակարգված հերքեին գնոստիկյան ուսմունքները, սուրբ գրային քմահաճ մեկնաբանությունները: Այդպես առաջացավ Ալեքսանդրիայի քրիստոնեական աստվածաբանական մեծ դպրոցը մոտ 180-ին, որի առաջին ուսուցիչն է եղել սիցիլիացի փիլիսոփա Պանտենոսը:

Ալեքսանդրիայի դպրոցն առաջինն էր, որ սահմանել է եկեղեց-գիտական աստվածաբանության հիմնական սկզբունքներն ու եղանակները, առաջին քայլը կատարել դասական հին գիտությունն ու փիլիսոփայությունը «եկեղեցականացնելու» գործում, ձգտելով հաշտեցնել «գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, հին քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ»[4] : Ալեքսանդրիայի դպրոցի մշակած եկեղեցական գրականության որոշիչ նկարագիրն է հավատի բովանդակության Հուստինիանոս I բնազանցական ուսումնասիրությունը, մեծ հակումը դեպի Պլատոնի և նոր պլատոնական փիլիսոփայությունը և Աստվածաշնչի այլաբանական մեկնությունը (տես Մեկնողական գրականություն)՝ ի հակադրություն Անտիոքի դպրոցում գերակշռող Արիստոտելի փիլիսոփայության և Ս.Գրքի մեկնության պատմաբանասիրական եղանակի : Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցը, որը հիմնվել է առավելապես քրիստոնեական քարոզության նպատակով, ունեցել է կանոնավոր շրջանների բաժանված դասընթացներ, ուսուցման որոշ եղանակ ու ծրագիր թե՛ հեթանոս և թե՛ նորադարձ քրիստոնյա ուսանողների համար: Հեթանոս ուսանողները մասնակցել են ընդհանուր դասախոսություններին: Նրանց համար դասավանդվող հիմն. առարկաներն էին դիալեկտիկան, ֆիզիկան, մաթեմատիկան, երկրաչափությունը, աստղագիտությունը,

[3] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002թ էջ 23

[4] Սագարդա, «Յոյն Արևելքի հին եկեղեցական աստուածաբանական գիտութիւնը», էջ 17–18 (ըստ քրիստոնյա Հայաստան հանրագիտարանի 2002 թ էջ 25)

հունական փիլիսոփայությունը և հայեցողական աստվածաբանությունը: Իսկ բարձրագույն գիտակրոն. դասախոսություններին մասնակցել են միայն քրիստոնյա ուսանողները, որոնք բացի վերոհիշյալ առարկաներից սովորել են նաև քրիստոնեական աստվածաբանություն, Աստվածաշնչի այլաբանական մեկնություն և փիլիսոփայություն: Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցն իր ծաղկման առաջին շրջանն է ապրել III դ. սկզբին, երբ Պանտենոսի մահից հետո դպրոցը ղեկավարելեն Կղեմես Ալեքսանդրացին (200–203) և Որոգինեսը (203–215): Սակայն երբ 215-ին Կարակալլա կայսրը գրավել է Ալեքսանդրիան, փակել է աստվածաբանական դպրոցը, հալածել Մովսես Խորենացի դասախոսներին, Որոգինեսը հեռացել է Պաղեստինյան Կեսարիա և այնտեղ հիմնել նոր դպրոց՝ առաջնորդվելով Ալեքսանդրիայի դպրոցում իր մշակած և հաստատած մանկավարժական ավանդույթներով, ուսման նույն ծրագրերով[5]: Ալեքսանդրիայի դպրոցի երկրորդ շրջանն սկսվել է IV դ. սկզբից և իր ծաղկման գագաթնակետին հասել եկեղեցու հայրեր, Ալեքսանդրիայի պատրիարքներ Աթանաս և Կյուրեղ Ալեքսանդրացիների օրոք, որոնք նաև դպրոցի ղեկավարն ու ոգին էին: IV–V դդ. քրիստոսաբանական մեծ վեճերի շրջանում : Ընդհանրական եկեղեցու պատմությունն ուղեկցվել է Ալեքսանդրիայի և Անտիոքի աստվածաբանական դպրոցների պայքարով, ու մինչև V դ. վերջը դավանական շարժումների մեջ առաջնորդող դերը պատկանել է Ալեքսանդրիայի դպրոցի աստվածաբանությանը: Ալեքսանդրյան դպրոցի քրիստոսաբանությունը խարսխված է «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարդացելոյ» բանաձևի վրա: Քրիստոսը կատարյալ Աստված է և կատարյալ մարդ: Աստվածությունը և Մարդեղությունն անփոփոխելի, անշփոթելի և անբաժանելի կերպով միացած են «մի բնության» մեջ: Այս միությունն էական և բնական միություն է և,միևնույն ժամանակ՝ անճառելի և անհասանելի մտքի համար: Ալեքսանդրյան ավանդությունը մերժում է ցանկացած բաժանությունև երկվություն Քրիստոսի մեջ: Մի է Քրիստոս՝ մարմնացյալ Բանը, մի աստվածամարդկային բնություն, մի անձ, մի դեմք, մի կամք, մի ներգործություն: Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության ամենանշանավոր ներկայացուցիչը Աթանաս Ալեքսանդրացին է: Նա քրիստոնեական ամբողջ աշխարհայեցողությունը կենտրոնացրել է փրկության գաղափարի մեջ և հաստատել քրիստոնեության էության ըմբռնումը որպես փրկությանկրոնի էություն: Նրա բոլոր

[5] Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան 2002թ էջ 25

ձգտումներն ուղղված էին Փրկչին և փրկությանը, փրկությանգաղափարի տեսակետից քրիստոնեության մեջ Քրիստոսի կենտրոնական նշանակությունը ճանաչելուն: Հիսուս Քրիստոսի անձնավորության մեջ աշխարհ է եկել կատարյալ և ճշմարիտ աստվածությունը: Փրկության խորհուրդը, որ է՝ Աստվածամարդու միջոցով մարդկության փրկությունը աստվածային կյանքի համար, Աթանաս Մեծը դարձրել է քրիստոնեական կրոնի մեծ սկզբունքը, աստվածաբանության ուղղությունը: Աթանաս Ալեքսանդրացին փրկության գաղափարը խտացրել է «Աստված մարդացավ, որպեսզի մարդ աստվածանա» բանաձևի մեջ, որը և եղել է քրիստոսաբանության արևելաքրիստոնեական ընկալման առանցքը: Ալեքսանդրիայի դպրոցի ինքնուրույն հոսանք է կապադովկյան հայրերի (Բարսեղ Կեսարացի,Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի)աստվածաբանությունը, որը կրում է Աթանաս Ալեքսանդրացու և, հատկապես, Որոգինեսի ազդեցությունը: Իր առանձնահատկություններով հանդերձ կապադովկյան հայրերի աստվածաբանական վարդապետությունը ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության նոր շրջանն էր: V–VIդդ. կրթություն ստանալու համար Հայաստանից Ալեքսանդրիա են մեկնել հայ երիտասարդներ, որոնց թվում՝ պատմահայր Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը: V դ. վերջին Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» հակաքաղկեդոնական երկի հայերեն թարգմանությամբ, այնուհետև 506-ին Դվինի եկեղեցական ողովում Քաղկեդոնի մերժմամբ Հայ եկեղեցին կանգնել է ալեքսանդրյան աստվածաբանության դիրքերի վրա՝ մերժելով հանգանակի վրա ավելացված, ալեքսանդրյան ավանդությանը և երեք տիեզերաժողովների դավանությանը հակասող ամեն մի նորամուծություն:

Սուրբ Գրքի Ալեքսանդրյան մեկնություն

Ալեքսանդրիայի մեկնողական դպոցը , որդեգրելով շեշտված այլաբանական եղանակը , իր կողմնորոծում հիմնավորում ե առավելապես այն պատճա-ռաբանությամբ , թե՝ մեկնվող բնագրերը թեև ունեն իմաստային դրսևորման երկու հիմնական եղանակ , մեկը ՝ պարզ ,ուղիղ , անմիջական, տառացի կամ բառացի , մյուսը՝ ծածուկ , փոխաբերական, պատկերավոր, ածանցվող, այլաբանական (եբրայերեն՝ ռեշատ) բայց շատ ավելի կարևոր ու ճիշտ է գտնել և մարմնավորել երկրորդը, որովհետև էական , նպատակային իմաստը միայն այդ կերպ կարելի է երևան բերել: Աստվածաշնչի գրքերը պարզամիտ հորինվածքներ չեն, ինչպես թվում են առաջին հայացքից , այլ պարունակում են խորհին խորհուրդներ : Այն, ինչ ակներև է ու դյուրությամբ բացատրելի է դա միայն արտաքին շղարշն է, որով սքողված են բուն հանձնարարաելի սրբազան մտքերն ու հոգևոր թելադրությունները: Հարկավոր է ունենալ սրատես , խորաթափանց խելամտություն: Դրա համար այնպիսի մեկնիցիներ են պետք , որոնք օժտված լինեն ոչ միայն նման կարողությամբ, այլև աստվածային հայտնությամբ ու լույսի ներգործությամբ: Նոր կտակարանում առաքյալների վրա Ս. Հոգու հրեղեն լեզվի կերպարանքով իջնելու հրաշապատումը դրա քրիստոնեական վավաերացումն է:[6] Պետք է միշտ հետամուտ լինել , որ այդպիսով նկատվի ու ներկայացվի աստվածային ճշմարտությունը , չլինի թյուրըմբռնումներ , թյուր բացատրություններ և մնանավանդ խոտելի եզրակացություններ:[7]

Կղեմես Ալեքսանդրացին քրիստոնեական աստվածաբաններից առաջինն էր, որ հայտարարեց, թե Սուրբ Գիրքը անհրաժեշտ է մեկնել առավելապես այլաբանորեն, քանի որ բառացի իմաստը ծառայում է գաղտնի իմաստին, որն էլ անհրաժեշտ է գտնել: Լինելով մի տեսակ էկլեկտիկ, Կղեմեսն իհարկե չէր կարող ուշադրության չառնել հույն փիլիսոփաների ու բանաստեղծների այլաբանական մեթոդները, չէր կարող նաև հաշվի չառնել Հին Կտակարանի մեկնության

[6] Գործք առաքելեց Բ 1-4

[7] Անթապյան Փ. Հայ մեկնաբանական գրականության N 15, Երևան, 1986, էջ 71:

Փիլոնյան փորձը: Նա ամենայն ազնվությամբ հավատում էր, որ Սուրբ Գիրքը թաքցնում է իր իրական իմաստը, ինչն էլ պետք է գտնել:

Սուրբ Գրքի մեկնության Ալեքսանդրյան դպրոցի մյուս վառ ներկայացուցիչը Կղեմես Ալեքսանդրացու աշակերտ Որոգինեսն է (185-254 թթ.), որ հայտնի է որպես Սուրբ Գրքի գիտակ: Նա առաջին աստվածաբանն էր, որն ուսումնասիրում ու մեկնաբանում էր Սուրբ Գիրքը առաջին հերթին հանուն Սուրբ Գրքի: Այդ օրերի շատ եպիսկոպոսներ կա՛մ ուսանել են Որոգինեսի մոտ, կա՛մ եղել են նրա հետ բարեկամական հարաբերությունների մեջ, թեև կային մարդիկ, որ թշնամաբար էին տրամադրված:Որոգինեսն այնքան համարձակ գաղափարներ արտահայտեց, մեկնության տարատեսակ այնքան մեթոդներ կիրառեց, որ հետագա քրիստոնյա բոլոր մեկնիչները այսպես թե այնպես դառնում էին վերջինիս ժառանգները, եթե նույնիսկ անմիջապես չէին էլ հենվում նրա աշխատանքների վրա: Բացի այդ Որոգինեսը առաջին տեքստաբանն էր, բառի բուն իմաստով մեկնաբանն ու սիստեմատիկ աստվածաբանը: Որոգինեսի ամենակարևոր ստեղծագործությունը «Ստրոմատիս» և «Սկզբունքների մասին» աշխատություններն են: Նա նաև հեղինակն է «Վեցիջանի», որ ընդունված Յոթանասնիցի վերանայման փորձ էր: Այս կարևոր աշխատանքում Որոգինեսը զետեղում է եբրայերեն տեքստը Յոթանասնիցի ու հունարեն այլ թարգմանությունների կողքին:

Որոգինեսը տարբերակում էր մեկնությունների չորս մեթոդ՝1. տառացի, 2. այլաբանական կամ տեսական (ալեգորիա), 3. փոխաբե-րական (տռոպոլոգիա) և 4. խորհրդապաշտական (անագոգիա, անալո-գիա)՝ մեկնության ամենաբարձր աստիճանը: Իսկ միջնադարում մեկնու-թյան եղանակներն էին՝ 1. տառացին, 2. այլաբանականը, 3. բարոյականն և 4. Խորհրդականը[8]:

Մի շարք մասնագետներ փորձ կատարեցին հստակ բացատրել, թե ինչպես այդ մեթոդները կիրառվելով մեկնություններում ու ճառերում՝ հասան մեր օրեր:

Որոգինեսը լավ չէր ըմբռնում սուրբգրային նյութի պատմական բնույթը, նա հատկապես հետաքրքված էր տեքստն այլաբանորեն ընթերցելու արդյունքում բացահայտվող ներըմբռնմամբ: Այլաբանությունը խրախուսվում է նաև Սուրբ Գրքի մասին ունեցած «մարգարեական» ընկալումներով, որոնք Քրիստոնեության ծագումից սկսած տեքստերը

[8] Տարեգիրք 2017 Է. Մ. Շիրինյան Աստվածաբանությունը եւ մեկնությունը:

դիտարկում են որպես Քրիստոսին ուղղված քողարկված մարգարեություններ: Իրոք, Որոգինեսը ավանդական «տիպերն» ու մեսիական մեկնաբանությունները ներմուծում է իր հոգևոր իմաստի մեջ: Բայց ժամանակակից քննարկումները պնդում են, որ նրա հայացքները խորթ են Սուրբ Գրքին և ծնունդն են հելլենական միջավայրի: Որոգինեսի մոտեցումները համապատասխանում են Կղեմես Ալեքսանդրացու դիրքորոշումների հետ. կրոնական լեզուն ներկայանում է մարգարեության, գաղտնիքների, սիմվոլների տեսքով: Սուրբ Գրքի ճշմարտությունը վարագուրված է և այդ վարագույրը բացվում է մի բանալիով, որ է Քրիստոս: Մեկնությանն ուղղված Որոգինեսի նման մոտեցումը, սակայն, մշտապես դժվարությունների մեջ է ընկնում: Որոգինեսը թեև նշում է մեկնության երեք մակարդակ, սակայն հաճախ բառացի մեկնությունից այնքան է խուսափում, որ կարելի է ասել կիրառում է երկաստիճան մեկնաբանություն: Նա նույնիսկ ուղղակի պնդում էր, որ «կան որոշ հատվածներ, որոնք որ չունեն նյութեղեն իմաստ:

Ինչպես տեսնում ենք, Սուրբ Գրքի բովանդակությունը Որոգինեսի համար տարատեսակ գաղտնիքների ու հանելուկների ահռելի պահարան է, որոնց բացահայտությամբ էլ պետք է զբաղվի մեկնիչը:

Որոգինեսն է որ, այս բոլոր նախադրյալներից բխեցրած իր եզրակացությունները բերեց մի ընդհանուր միասնական համակարգի , և դա, ի վեջո դարձավ հիշյալ դպրոցի պաշտոնական հանգանակը: Իր հատկապես Յաղագս առաջնոց սկզբանց և մյուս մեկնությունների մեջ նա ներկայացնում է իր տեսական հիմնավորուները՝ թե ինչը պիտի հիմք ընդունել , ինչով պետք ՝ առաջնորդվել , ինչով պետք է առաջնորդվել , ինչն է ավելի ճիշտն ու գերադասելին գերադասելի :

«Մարմինը» կամ «մարմնականը», ըստ Որոգինեսի, մեկնաբանվող բնագրի նյութական, ակնհայտ, պատմական – քերականական մասն է: Այն համեմատաբար նվազ կարևորություն ունի. պարզապես, արտաքին կեղև է ու միջոց, որով պահպանվում և հայտնվում է բուն իմաստը: «Միտքը» կամ «մտավորը» այդ բնագրերից հանված խրատական, բարոյական, ուսուցողական – դաստիարակչական իմաստի ածանցումն է: Այն, անշուշտ, շատ ավելի կարևոր է, քան մարմնականը, քանի որ վերաբերում է մարդու բարոյական աշխարհի

բյուրեղացմանը: Թեկուզ այս երկուսի հետ էլ օրգանական կապի մեջ է, բայց երկուսից էլ առավել կարևորություն ու նշանակություն ունի «հոգին» կամ «հոգևորը», որ հիշյալ բնագրի բուն խորհուրդն է, ձգտումն ու վերջնական նպատակը: Դրա շնորհիվ է, որ մարդը հաղորդակցվում է աստվածային շնորհների հետ: «Հոգևորը» հենց լիովին այլաբանական կատեգորիա է:

ԱՆՏԻՈՔՅԱՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Անտիոքը Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ հայտնի է իր նշանավոր աստվածաբանական դպրոցով, որը Աստվածաշնչի մեկնության մեթոդի և քրիստոսաբանական հարցերում հակաճառությունների ու պայքարի մեջ է եղել Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի հետ: Ի տարբերություն Ալեքսանդրիայի, Անտիոքի աստվածաբանական դպրոցը չի ունեցել հատուկ կամ պաշտոնական ուսումնական հաստատություններ. դրա ջատագովները հաճախ շրջել են քաղաքներում և քարոզել իրենց ուսմունքը: Չնայած Անտիոքի հելլենիստական հարուստ անցյալին, այնուամենայնիվ անտիոքյան աստվածաբանական ուղղության մեջ մեծ տեղ են գտել բուն սեմական պատկերացումներն ու աշխարհայացքը, հատկապես՝ ասորական հասարակության տեղական և պատմական առանձնահատկությունները: Եթե Ալեքսանդրյան դպրոցին հատուկ էր նորպլատոնականությունը և միստիցիզմը, ապա անտիոքյան աստվածաբանությունն ուներ արիստոտելյան և պատմական ուղղվածություն[9]:

Ս. Գրքի մեկնության անտիոքյան պատմաքերականական մեթոդը հակադրվել է ալեքսանդրյան այլաբանական մեթոդին: Անտիոքի եկեղեցու հայրերը խուսափել են իրենց տեքստերը դժվարամատչելի հասկացություններով ու արտահայտություն-

ներով ծանրաբեռնելուց և դրանցում չեն քողարկել խորհրդավոր, առեղծվածային մտքեր: Անտիոքացիները բառացիորեն են բացատրել Աստվածաշնչի դժվար ըմբռնելի տեղիները՝

[9] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան Երևան 2002 էջ 67

ընթերցողին հասկանալի դարձնելու նպատակով: Անտիոքի դպրոցում գերիշխել է զգաստ, տրամաբանական մտածողությունը: Անտիոքյան աստվածաբանները կրոնագիտության միակ չափանիշ են համարել տրամաբանությունը, ձգտել իրենց դավանական տեսություններն անցկացնել մաքուր տրամաբանության ճանապարհով՝ հաճախ ընկնելով չոր բանական փիլիսոփայական (ռացիոնալիզմ) ծայրահեղությունների մեջ: Անտիոքի ուղղությունը թեև լիովին չի մերժել այլաբանությունը, սակայն գերադասել է պատմական մեթոդը և խստորեն քննադատել Հին և Նոր կտակարանների կամայական զուգորդումները: Ըստ անտիոքացիների, իսկական այլաբանական միտքը (որը կիրառել են ալեքսանդրացիները) խոսքերի մեջ չէ, այլ՝ խոսքերով արտահայտված իրականության, անձանց և դեպքերի մեջ: Անտիոքի դպրոցի մի շարք ներկայացուցիչներ (Հովհան Ոսկեբերան, Թեոդորիտ), հավատարիմ մնալով անտիոքյան մեկնաբանության սկզբունքներին, յուրացրել են նաև Ալեքսանդրյան դպրոցի լավագույն կողմերը և տվել գիտական մեկնությունների օրինակներ, որոնք ուղղափառ մեկնաբանության լավագույն նմուշներն են: Այդ իմաստով նրանց աշխատություններն առ այսօր նշանակալից արժեք են ներկայացնում Սուրբ Գիրքն ուսումնասիրողների համար: Քրիստոսաբանական տարբեր, անգամ հակադիր համակարգերը, Անտիոքի և Ալեքսանդրիայի ուղղությունների բախումը հող են նախապատրաստել IV–V դդ. դավանաբան. մեծ վեճերի համար: Անտիոքի դպրոցի աստվածաբանները շեշտել են Քրիստոսի պատմական, մարդկային անձնավորությունը, Քրիստոսի մարդ լինելը: Սամոսատի, այնուհետև Անտիոքի եպիսկոպոս (260–270) Պողոս Սամոսատցին, որը համարվում է Անտիոքի դպրոցի հիմնադիրը, քարոզում էր, որ Քրիստոսը ծնվել է իբրև մարդ և ապա լցվել Լոգոսով, այսինքն նրա մեջ աստվածության երկրորդ անձն է բնակվել և կամքի միությամբ ու սիրոմշտնջենականությամբ մեկ դարձել Աստծո հետ: Նա ավելի բարձր է, քան մարդը, բայց աստվածացել է իր բարոյական զարգացման նորդեգրության շնորհիվ: Պողոս Սամոսատցին առաջինն էր, որ առաջ է քաշել Քրիստոսի էության երկակիության գաղափարը: Թեև 268-ի Անտիոքի եկեղեց. ժողովը բանադրել և աթոռազրկել է Պողոս Սամոսատցուն, սակայն նրա համախոհները, մասնավորապես Լուկիանոս Սամոսատցին, շարունակել են քարոզել իրենց ուսուցչի վարդապետությունը: Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները, Քրիստոսի մեջ շեշտելով մարդուն («Խոստովանեսցուք զոր ի մարդումն Աստուած»), Քրիստոսին համարել են ամենակալ Աստծուն երկրպագակից

մարդ երկու բնությամբ՝ Աստված առանձին, մարդն առանձին,նրանք գոյություն ունեն իրարից անջատ, մեկը՝ ճշմարտապես բնությամբ որդի, մյուսը, շնորհիվ որդեգրության՝ Աստված: Մարդ Քրիստոսը բնակարան, տաճար է եղել աստվածայինի համար: Մարիամը ոչ թե Աստվածամայր է, այլ աստվածության հետ միացած մարդու մայրը (Նեստոր): Անտիոքի և Ալեքսանդրիայի քրիստոսաբանական տարբեր մեկնակետերն արտահայտվել են հետևյալ բանաձևերով. «Մարդ, որն աստվածացել», «Աստվածազգեստ մարդ» (Անտիոքի դպրոց) և «Ինքը Աստվածն է մարդ դարձել», «Մարդացյալ Աստված» (Ալեքսանդրիայի դպրոց): Ի տարբերություն Ալեքսանդրիայի դպրոցի, անտիոքացիները, տարանջատելով Քրիստոսի երկու բնությունները, հանձին Հիսուսի տեսել են մի մարդու, որը ծնվել է մշտնջենական Բանից (Լոգոս) և նրա անբաժանելի մասն է: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նրանք ծիսակատարություններից և իրենց աստվածաբան. գրականությունից դուրսեն թողել «Որդի» բառը:[10] Ըստ Անտիոքի աստվածաբանության, աստվածային Բանն ընտրել է Հիսուսին որպես իր գործիք, որը, սակայն, զարգացել է զուտ մարդկային բարոյական ուղիով: Դա համարվել է Աստծուն մոտենալու հիմնական ճանապարհը, և այդ ամենը հարգանք է ծնել մաքուր և անարատ դառնալու մարդկային ձգտումների ու ճիգերի հանդեպ: Այդ գաղափարների տրամաբան. շարունակությունն է եղել «ազատ ընտրության» վերաբերյալ պելագիականների ուսմունքը, որն էլ իր հերթին մեծ ազդեցություն է ունեցել Նեստորի վարդապետության վրա :

Նեստորականությունը Անտիոքի աստվածաբանական դպրոցի զարգացման վերջին փուլն էր: Անտիոքի դպրոցի աստվածաբանության որոշ սկզբունքներ ընկել են Լևոնի տոմարի և Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանական համակարգերի հիմքում: IV դ. վերջին քառորդից մինչև V դ.կեսը եղել է Անտիոքի և Ալեքսանդրիայի դպրոցների ծաղկման շրջանը: Թեև IV դ. Անտիոքի դպրոցը տվել է արիոսական և արիոսականությանը հարող աստվածաբաններ (Եվսեբիոս Նիկոմեդացի, Նումերիոս, Եվսեբիոս Եմեսացի, Այետիոս Անտիոքացի, Եվնոմիոս Անտիոքացի և ուր.), որոնք կրել են նաև Լուկիանոս Սամոսատցու ազդեցությունը, սակայն ունեցել է նաև իր ուղղափառ գործիչները: Եվստաթեոս Անտիոքացին առաջինն էր արիոսականությունը դատապարտողներից, իսկ Հովհան Ոսկեբերանը հռչակվել է Ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից: Անտիոքի դպրոցի IV–V դդ. նշանավոր

[10] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան Երևան 2002 էջ 68

աստվածաբաններից էին նաև Դիոդորոս Տարսոնացին, Թեոդորոս Մոպսուեստացին, Թեոդորետ Կյուրոսցին և ուրիշներ: Անտիոքի, ինչպես և Ալեքսանդրիայի, Աթենքի աստվածաբանական դպրոցները փակվել են VI դ.՝ բյուզանդացի կայսր Հուստինիանոս I-ի օրոք:

Սուրբ Գրքի անտիոքյան մեկնություն

Անտիոքի դպրոցը որդեգրել էր այլաբանականին հակադիր մեկնաբանական տառացի կամ բառացի եղանակը ըստ որի հարկավոր էր մեկնաբանվող նյութը իր ողղակի անմիջականորեն արտահայտված իմաստով մեկնաբանվի , որովհետոր թե հին և թե նոր կտակարանի գրքերը գրված են աստվածայի հայտնությամբ Աստծո խոսքն ու շունչն են ներկայացնում իսկ աստված հարկադրված չեր մարդու հետ գախտնախոսելու հակառակ խոսել է պարզ ու իմանալի: Այդ խոսքը ծածուկ ենթակայական փոխաբերական մտքով ողողելու ոչ անհրաժեշտություն ոչ էլ նպատակ կարող է լինել :[11] Անտիոքյան դպրոցը կարծում էր որ գիրքը ամբողջությամբ կամ պարբերությունը բառը թեկուղ և առանձին նշանը սիմվոլը պետք է ընկալվեն ու ներկայացվեն առանց կողմնակի վերագրումների ու վերապահումների այլապես կարող են անճշտությունների և հավելագրումների նույնիսկ սխալի ու կեղծիքի հանգեցնել: Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչները մանրակրկիտ քննարկում էին բնագրերի բնագիտական չափանիշները, ճշտում իմաստային նրբությունները կատարում էին լեզվաքննական վերլուծություն և ստուգաբանություն՝ ջանալով ըմբռնել նյութի անմիջական իմաստը: Այս դպրոցի ներկայացուցիչների համար կարևոր տեղ էին զբաղեցնում նաև պատմական փաստերը, նյութի պատմականությունը, քանզի նրարց համար այդ բնագրերը ներկայացնում էին հրեա ժողովրդի պատմությունը, կենցաղը, ավանդույթները, փիլիսոփայական, իրավագիտական ժառանգությունը: Եվ բնականաբար, ժամանակի ընթացքում դրանք փոխանցվել և շարունակում էին փոխանցվել քրիստոնեությանը, ուստի շատ էական էր դրանց ճիշտ ընկալումն ու ուսումնասիրությունը: Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչները մեծ զգուշավորություն էին ցուցաբրում Ալեքսանդրյան այլաբանության նկատմամբ: Նրանք քաջ գիտակցում էին, որ այլաբանությունը անտիկ հեթանոսական

[11] Անթապյան Փ. Հայ մեկնաբանական գրականության N 15, Երևան, 1986, էջ77

աշխարհում կիրառվել է բացատրելու և արդարացնելու համար դիցաբանական որոշակի իրողություններ: Եվ պնդում էին, որ այս ձևի կիրառությունը Ալեքսանդրացիների կողմից հետապնդում էր հենց այս նպատակը, և այստեղ իշխում էին հելլենական տարրերը: Նրանք զգուշանում էին նաև գնոստիկյան ուղղակի ազդեցությունից: Խոսելով աստվածաբանական մյուս նշանավոր՝ Անտիոքյան դպրոցի մասին, նախ և առաջ պետք է նշել, որ իրենց փիլիսոփայական հայացքները Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչները որդեգրել էին արիստոտելականությունից: Անտիոքյան դպրոցի փիլիսոփայական և աստվածաբանական առանձնահատկությունը նրանում էր, որ նրանց գաղափարների հիմքում ընկած էին ռեալիզմը և ռացիոնալիզմը: Նշելով փիլիսոփայական մտքի զարգացումը այս դպրոցում՝ չպետք է մոռանալ նրա աստվածաբանական գաղափարներն ու աստվածաբանության զարգացումը: Սակայն հստակորեն կարող ենք նշել, որ աստվածաբանական այդ գաղափարները անմիջականորեն ազդված արիստոտելականությունից:Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչները խորապես ուսումնասիրում էին Արիստոտելի գաղափարները և աչքի էին ընկնում իրենց դիալեկտիկական արվեստով: Ուսումնասիրողները նշում են, որ նրանք սիրում էին վիճաբանել, և որ իրենց ուսմունքը բացահայտում էին արիստոտելականության և սիլոգիզմի հետևաբանություն շնորհիվ:

Հովհան Ոսկեբերանն ավելի քարոզիչ էր, քան մեկնիչ, թեև նրա հենց այդ հռետորական կարողություններն էլ, եթե կարելի է այդպես ասել, հռչակ բերեցին Անտիոքին:

Ընդհանուր առմամբ և՛ Թեոդոր Մոպսուեստացին, և՛ Հովհան Ոսկեբերանը կարծում էին, որ Սուրբ Գիրքը, բացի այն հատվածներից, որտեղ դիտավորյալ կիրառվում են այլաբանություններ, փոխաբերություններ և այլ լեզվական արտահայտչաձևեր, անհրաժեշտ է հասկանալ բառացի: Հովհան Ոսկեբերանը մեկնության գործընթացը բաժանում է երկու մասի՝ իմաստի վերհանումն ու դրա կիրառում, որն էլ իր հերթին կարող է լինել տարատեսակ: Այլաբանության կողմնակիցները Սուրբ Գիրքը կիրառական կյանում որպես ներշնչման աղբյուր տեսնելու ձգտում ունեին: Նրանք հավատում էին, որ Սուրբ Գիրքը տարատեսակ իրավիճակներում կարող է «խոսել» տարբեր կերպ: Սա է, որ մղում էր այլաբաններին փնտրել տեքստի տարատեսակ իմաստներ: Վերադառնալով Հովհան Ոսկեբերանին կարող ենք ասել, որ նա նույն նպատակին հասնում է այդ իմաստների կիրառությունների փնտրտուքով:Ցավոք

Անտիոքի դպրոցն ու իր առաջ քաշած պատմա-քերականական մեթոդը հետին պլան մղվեցին, քանի որ այս դպրոցում սովորել էր Ներստորը, որը արդյունքում նզովվեց որպես հերետիկոս:[12]

Անտիոքի մեկնաբանական դպրոցը, որի հիմքում ընկած էր պատմա-քերականական մեթոդը, այլաբանական մեթոդի դեմ իր անհամաձայնությունն արտահայտում էր հետևյալ կետերով: Այլաբանական մեթոդը մեղադրվում էր. Տեքստ այլ իմաստներ ներմուծելու մեջ, բոլոր տեքստերին պարտադիր կերպով գաղտնի իմաստ փաթաթելու մեջ,հորինված ու մտացածին մեկնաբանություններ կատարելու մեջ,նախադասություններին ու արտահայտություններին բացահայտ և նորմալ նշանակություն արտահայտել թույլ չտալու մեջ,

Այլաբանությունը, երբ դուրս է գալիս լավ պատրաստված ու բարեպաշտ մեկնաբանի բերանից, կարող է լինել շատ արժեքավոր:

Ոմանք ասում են, որ Սուրբ Գիրքը չափազանց հարուստ է, այդ իսկ պատճառով այն տարաբնույթ իմաստներ է պարունակում: Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները միանշանակ ընդունում էին, որ Սուրբ Գիրքը իմաստության ամենահարուստ ու անսպառ աղբյուրն է, սակայն նրանք այլաբանության մեջ վտանգ էին տեսնում, որ ամեն մարդ կարող է իր հայեցողությամբ հաստատել այս կամ այն հատվածի իմաստը և մերժել մյուսը:

Ակնհայտ է, որ Ալեքսանդրյան դպրոցը բավական հիմնավոր կերպով քննադատվում էր այն պատճառով, որ դրա կողմից կատարված մեկնությունները մեծ հաշվով կապված էին մեկնաբանի մտավոր ունակություններից, քան ներշնչված հեղինակի կողմից գրված բնօրինակում առկա մտահղացումից: Այս մեթոդի միջոցով կարելի էր և կարելի է պնդել ու «ապացուցել» Սուրբ Գրքով այն ամենի ճշմարտացիությունը, ինչ որ կա մեկնաբանի մտքում: Անտիոքյան մեթոդը կենտրոնացած է տեքստի ուղիղ, հասկանալի ու ակնհայտ իմաստի վրա: Այս մեթոդի շրջանակում գլխավոր շեշտադրումը կատարվում է այն լուրի վրա, որ հայտնում է մեզ հեղինակը: Անտիոքյան մեթոդը համառորեն շեշտադրում էր պատմական համատեքստի ու բնական մարդկային լեզվի կարևորությունը: Այն չէր սրփագրում լեզվի արտահայտչաձևերը, մարգարեությունները կամ սիմվոլները, բայց ստիպում էր, որպեսզի դրանք կապվեն հեղինակի

[12] Անթապյան Փ. Հայ մեկնաբանական գրականության N 15, Երևան, 1986, էջ 78

ոճին, նպատակին ու պատմական համատեքստին, ինչպես նաև գրական ժանրին: Անտիոքյան դպրոցը պաշտպանում էր սուրբգրային հայտնության մեջ պատմական իրականության կարևորությունը: Նրանք ասում էին, որ կարելի է այլաբանությանը դիմել միայն այն ժամանակ, երբ համոզված ենք, որ չենք վտանգում անմիջական իմաստի ընկալմանը: Այս մեթոդի կողմնակիցները չէին ցանկանում այդ պատմական իրականությունը կորցնել սիմվոլների ու ստվերի աշխարհում: Այս դպրոցի ներկայացուցիչները ավելի հետևում էին Արիստոտելին, քան՝ Պլատոնին:

Այս դպրոցի վառ ներկայացուցիչներից էին Ղուկիանոս Անտիոքացին, Դիոդոր Տարսոնացին, Թեոդոր Մոպսուեստացին ու Հովհան Ոսկեբերանը: Հետագայում այս դպրոցը տարվեց Հիսուս Քրիստոսի մարդկային բնության չափազանց շեշտադրությամբ: Այդ շեշտադրումը ծնունդ տվեց նեստորականությանը: Այս պատճառով Անտիոքյան աստվածաբանական դպրոցը կորցրեց իր հեղինակությունն ու զկվեց իր հետևորդներից շատերից: Այս դպրոցի ուսուցիչները տեղափոխվեցին Պարսկաստան, որպեսզի հեռու լինեն Բյուզանդական կայսրության ճնշումներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ուսումասիրելով Ալեքսանդրան և Անտոքյան դպրոցները նրանց մեկնողական դիրքորոշումը եկան այն եզրահանգման որ այս երկու դպրոցների առաջ քաշած զույգ եղանակներից որևէ մեկին նախապատվություն տալը սխալ կլինի քանի որ . եթե հետևենք միայն Ալեքսանդրյան մեկնությանը և Սուրբ գիրքը մեկնենք միայն այլաբանակնբ մեթոդով կնկնենք ծայրահեղության մեջ որովհեև չնայած այլաբանական մեթոդի որոշ դրական կողմերի այն հիմնականում ավելի շատ խնդիրներ է հարուցում, քանի որ չի սահմանափակվում հստակ կանոններով, և հետևաբար, հնարավորություն է ստեղծում, որ երևակայություն ունեցող ցանկացած մարդ Սուրբ Գրքով հաստատի յուրաքանչյուր ուսուցում կամ հերետիկոսություն: Գլխավոր խնդիրն այն է, որ չկա որևէ միջոց, որպեսզի միայն,տեքստից ելնելով միանշանակ հիմնավորվի տեքստի իմաստը: Բայց մյուս կողմից էլ պետք է փաստել, որ մարդու մեղավորության արդյունքում այդ մեթոդը դարձավ ուղղակի մտքին եկածը ապացուցելու և այնուհետև դա սուրբգրային հռչակելու միջոց: Մեկնաբանը մշտապես կանգնած է էյսեգետիկայի վտանգի առաջ: Նա կարող է Սուրբ Գիրք ներմուծել այն մտքերը, որ ստացել է օտար աղբյուրներից, իսկ հետո ընդունել դրանք այն գրքի հեղինակությամբ, որի մեջ ներմուծում է դրանք: Այլաբանները եկան այն սխալ եզրակացության, որ բառացի իմաստը չափազանց պարզ է, և որ դրա արտաքին կաղապարի տակ թաքնվում են ավելի խորը գաղտնիքներ, որոնք կարելի է դուրս բերել միայն այլաբանության միջոցով: Սակայն նույնը կարող ենք ասել Անտիոքյան մեկնության համար քանի որ Սուրբ գիրքը մեկնել տառացի , բառացի մեկ այլ ծայրահեղություն է : միանշանակ Սուրբ գրքում կան այնպիսի հատվածներ որոնք ուղղակիորեն պահանջում են այլաբանական մեկնություն: Հատկանշական է նաև ասել որ և Անտիոքյան և Ալեքսանդրյան դպրոցի մեկնիչնեչը մեկնություններ գրելիս կիրառել են և այլաբանական և տառացի , բառացի եղանակները: Այս զույդ եղանակներից որևէ մեկին նախապատվություն ու գերակշռություն տալը ուներ մի այլ ելակետ Ալեքսանդրյան և Անտիոքյան դպրոցների համար `այն բարձրացնում էր համապատասխան դպրոցի , այդ դպրոցը հովհանավորող եկեղեցական աթոռի , ուրեմն նրա հասարակական – քաղաքական կողմնորոշման վարկն ու հեղինակությունը :Մանավանդ արդեն եկեղեցական

աթոռների տրոհման ճանապարհ բռնած քրիստոնեությունը ավելի էր կարևորություն տալիս այս իրողությանը: Արդեն հասկանալի է դառնում որ եռրկու դպրոցների մոտ ոչ միայն մտածողության խնդիր էր, Սուրբ գրքի ճիշտ մեկնություն հավատացյալ ժողովրդին հասցնելն էր այլ նաև տվյալ դպրոցի իշխանությունն հաստատելն էր:

Օգտագործված գրականության ցանկ

1.Անթապյան Փ. Հայ մեկնաբանական գրականություն տեսական նախահիմքերի շուրջ ԲՄ 15 Երևան 1986

http://www.matenadaran.am/ftp/data/Banber15/4.P.Antapyan.pdf

2.Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան Երևան 2002

http://ter-hambardzum.net/wp-content/uploads/2013/04/QristonyaHayastan.pdf

3.Է. Մ. Շիրինյան Աստվածաբանությունը և մեկնությունը Տարեգիրք ժ Երևան 2017

https://internationalrelationship.academia.edu/ErnaShirinian

4.Արևշատյան Ս., Դավիթ Անհաղթի ժառանգությունը նոր լուսաբանությամբ ԲՄ ,N9, Երևան, 1969:

http://www.matenadaran.am/ftp/data/Banber9/1.S.Arevshatyan.pdf

5.Соколов В.В, Средневековая философия, Москва, 1979.